

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Աշխարհում տարբեր երկրների միջև կապերն ու համընդհանուր իրավական կարգավարումներ ձեռք բերելու գործընթացներն այսօր առավել լայն շրջանակներ են ընդգրկել: Անխուսափելիորեն վերանայվում են նաև դրանց տեմպերը, քանզի արդեն ողջամիտ չեն կարող համարվել նախկինում ընդունված և կիրառելի համարվող ժամկետները, ինչը պայմանավորված է նաև ներկայումս ի հայտ եկած բազմաբնույթ մարտահրավերները հաղթահարելու ակնկալիքով: Որպես տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի հրամայական՝ ՀՀ կառավարությունը նույնպես նախաձեռնել է էլեկտրոնային կառավարության համակարգի ներդրման գործընթաց, որի անբաժան և ամենակարևոր բաղկացուցիչներից է էլեկտրոնային վարչարարությունը, որն էլ հանդիսանում է սույն հետազոտության առանցքային հարցադրումը:

Միավորված ազգերի զարգացման ծրագիրը (UNDP) էլեկտրոնային կառավարումն անվանում է ժողովրդավարական կառավարման կարևոր բաղադրիչ<sup>2</sup>: Ըստ այդ ծրագրի՝ էլեկտրոնային կառավարումը ներկայումս ձևավորված կառավարման համակարգի կատարելագործման նպատակով տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներում կատարվող հանրային ներդրում է: Էլեկտրոնային կառավարման համակարգը ստեղծում է հաղորդակցման նոր ուղիներ և հնարավորություններ, որոնք հզորացնում են ժողովրդին և ձայնի իրավունք են տալիս նրանց, ովքեր նախկինում փաստացի զրկված են եղել դրանից<sup>3</sup>:

2003 թ. «Համաշխարհային հանրային հատվածի զեկույց»-ի (World Public Sector Report) ժամանակ, երբ առաջին անգամ ներ-

---

<sup>1</sup> ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան:

<sup>2</sup> Տե՛ս <[http://www.undp.org/content/undp/en/home/ourwork/democraticgovernance/focus\\_areas/focus\\_access\\_information/\\_jcr\\_content/contentPar](http://www.undp.org/content/undp/en/home/ourwork/democraticgovernance/focus_areas/focus_access_information/_jcr_content/contentPar)>:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

կայացվեցին ՄԱԿ-ի՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի ուսումնասիրության արդյունքները, էլեկտրոնային կառավարությունը սահմանվեց որպես տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման միջոցով *կառավարության ընթացակարգերը վերափոխելու նպատակ հետապնդող գործիք*<sup>4</sup>՝ ինչպես ներքին կառուցվածքային, այնպես էլ արտաքին հարաբերությունների առումով<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը շուկայականի, դրա արդյունքում հասարակական կյանքում տեղի ունեցած խոր սոցիալ-քաղաքական փոփոխությունները հանգեցրին կառավարման համակարգի արմատական վերափոխման, կադրային կազմի նորացման, ինչն էլ զգալիորեն ազդեց նաև վարչարարության և փաստաթղթաշրջանառության կազմակերպման եղանակների ու շրջանակների վրա: ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 25-ի նիստի N 7 արձանագրային որոշման հավելվածով նախատեսվեց Հայաստանի Հանրապետությունում ձևավորել էլեկտրոնային հասարակություն, որի բազմաթիվ նպատակներից մեկն էր ստեղծել և ամբողջ երկրում հասանելի դարձնել էլեկտրոնային կառավարման համակարգը: «Էլեկտրոնային հասարակության ձևավորում» անվանումը կրող ռազմավարական գործընթացը, անկասկած, մեծ դերակատարում ունեցավ պետական նորարարական քաղաքականության համար:

Անժխտելի փաստ է, որ հանրապետությունում կատարվել են մի շարք կարևոր քայլեր էլեկտրոնային կառավարման ձևավորման ուղղությամբ, որոնց շարքում են «Mulberry» փաստաթղթերի էլեկտրոնային կառավարման համակարգին անցումը, էլեկտրոնային ստորագրությունը, փաստաթղթի և դիմումի ընթացքին էլեկտրոնային կարգով հետևելու հնարավորությունը, հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը, նույնականացման քարտերը (ID-cards) և կենսաչափական անձնագրերը, դատական տեղեկատվական էլեկտրոնային համակարգի հիմնումը, ինտերնետով հրապարակային ծանուցման պաշտոնական կայքը և այլն: Սակայն անհրաժեշտ է շեշտել, որ, չնայած էլեկտրո-

---

<sup>4</sup> Sté u The Economist, The Good, the Bad and the Inevitable, The Pros and Cons of E-Government, The Economist, Special Report, 2008, <http://www.economist.com/node/10638105>:

նային կառավարման համակարգում առաջացող հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի զգալի թվի առկայության (2000 թ. հետո ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք առանձին գործիքներով վերաբերում են էլեկտրոնային կառավարմանը, մասնավորապես՝ «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 26-ի «էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 137-Ն, 2010 թ. նոյեմբերի 11-ի «էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» թիվ 1504-Ն, 2008 թ. հունվարի 25-ի «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշումները և այլն), այդ ոլորտի շատ կարևոր հատվածներ մնում են առանց իրավական կարգավորման:

Ընդգծենք, որ մի շարք զարգացած երկներում (օրինակ՝ ԱՄՆ, Գերմանիա, Իսպանիա, Հարավային Կորեա և այլն) նման իրավական ակտերին զուգահեռ գործում են նաև էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային վարչարարության, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մասին ինքնուրույն օրենքներ<sup>5</sup>: Հաշվի առնելով, որ էլեկտրոնային կառավարման, ինչպես նաև էլեկտրոնային վարչարարության համակարգի կայացումը և արդյունավետ կիրառումը բավականին բարդ և խիստ ծախսատար գործընթաց է, կարծում ենք, որ նման հասարակական հարաբերությունների մանրակրկիտ, ճշգրիտ օրենսդրական կարգավորումն անհրաժեշտ է և ապացուցված միջազգային փորձով:

Էլեկտրոնային վարչարարությունը, որը էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնաքարերից է, կամ ինչպես ընդունված է այն կոչել՝ «e-administration»-ը, ամենապարզ բնորոշմամբ այն բոլոր

---

<sup>5</sup> St' u Mete Yildiz, E-government research: Reviewing the literature, limitations, and ways forward, Government Information Quarterly 24 (2007) 646–665, Department of Political Science and Public Administration, Hacettepe University, Turkey, <http://www.sciencedirect.com/science/article/pii/S0740624X07000056>:

եղանակների, միջոցների ամբողջությունն է, որը ավանդական թղթաբանությունը փոխարինում է էլեկտրոնայինով<sup>6</sup>: Էլեկտրոնային վարչարարությունը տեղեկատվական-հաղորդակցական գործիք է, որը նպատակ ունի բարձրացնելու ցանկացած մարմնի, կազմակերպության կատարողականը և արդյունավետությունը: Այն միտված է ցանկացած մարմնում կամ կազմակերպությունում ապահովելու բացարձակ թափանցիկություն և հաշվետվողականություն՝ նպատակ ունենալով ապահովել էլեկտրոնային կառավարման առավել կատարյալ համակարգ<sup>7</sup>:

Գերմանիայում այս համակարգը շատ լայն կիրառություն ունի բոլոր պետական մարմիններում, որտեղ հասարակության առջև հաշվետվողականությունը չափազանց կարևոր է<sup>8</sup>:

Այսօր ՀՀ-ում էլեկտրոնային վարչարարության կայացման ճանապարհին կարելի է առանձնացնել խնդիրների երեք հիմնական խումբ՝

1. Գործող օրենսդրությունը չի համապատասխանում ինտերակտիվ վիրտուալ միջավայրի և տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների արագ զարգացող միջավայրում առաջացող հարաբերությունների կարգավորման արդի պահանջներին:

2. Չկա մեկ միասնական տեղեկատվական-իրավական հիմք, որը կխթանի և կապահովի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վստահելի ինտերակտիվ համակարգի կայացմանը:

3. Բացակայում է էլեկտրոնային վարչարարության, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, ինչպես նաև այլ ծառայություններն էլեկտրոնային եղանակով մատուցելիս տեխնիկական անհրաժեշտ ապահովվածություն:

Այս ամենը թելադրում է վարչարարության սկզբունքների և հիմունքների վերանայում և փոփոխում՝ տեղեկատվական տեխնո-

---

<sup>6</sup> Տե՛ս Inderpreet Kaur, Effective E-Administration for good Governance, International Journal of Computing & Business Research ISSN (Online): 2229-6166, <http://www.researchmanuscripts.com/isociety2012/50.pdf>:

<sup>7</sup> Տե՛ս Stavros Zouridis and Marcel Thaeens, E-Government: Towards a Public Administration Approach, Asian Journal of Public Administration, Vol 25, No 2 (December 2003) 159-183, էջ 161-162:

<sup>8</sup> Տե՛ս Compendium of Innovative E-government Practices, Volume 2, United Nations publication, 2006, <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/UN/UNPAN023997.pdf>:

լոգիաների առանձնահատկությունները հաշվի առնելով: Տեղեկատվական հասարակությունում քաղաքացիների հետ հաղորդակցությունը, պետական ծառայությունների մատուցումը կատարվում են էլեկտրոնային փաստաթղթերի և վիրտուալ կապի միջոցով: Սակայն ՀՀ ներկայիս օրենսդրությունը գրեթե ամբողջապես արտացոլում է ավանդական փաստաթղթաշրջանառությունը և դեռևս ունի բավականաչափ խոչընդոտներ, ինչպես նաև սահմանափակումներ էլեկտրոնային եղանակի օգտագործման համար:

Գործող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբողջովին էլեկտրոնային վարչարարության անցնելը պահանջում է առեղծված աշխատանք՝ ուղղված օրենսդրության համակարգմանը և առանձին վարչական խոչընդոտների ու սահմանափակումների վերացմանը տարաբնույթ հարաբերություններում:

Ինչպես հայտնի է, *վարչարարությունը* վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն է, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ, հետևաբար, չի կարելի անտեսել, որ էլեկտրոնային կառավարման դեպքում ևս առկա կլինեն այդ հետևանքները, սակայն դրանց առնչությամբ արդեն հարկ կլինի կիրառել այլ չափանիշներ: Նկատենք, որ այդ խնդիրների մի սովոր հատվածը նկատելի է նաև ներկայումս, երբ ՀՀ-ում փաստացի կիրառվում են վարչարարության ինչպես ավանդական՝ թղթային, տարբերակը, այնպես էլ էլեկտրոնայինը, սակայն գործնականում այդ ակնհայտ էական առանձնահատկություններ ունեցող տարատեսակներն օրենսդրորեն տարբերակված չեն:

Վարչարարության հիշյալ երկու եղանակների համար էլ իրավական հիմք է հանդիսանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: Այս օրենքը, մեր կարծիքով, ինքնին ունի բավական բաղթողումներ և թերություններ և նույնիսկ ավանդական եղանակով վարչարարություն իրականացնելիս է դժվարություններ առաջացնում, իսկ էլեկտրոնային եղանակի դեպքում դրա անկատարությունը և «անպատրաստ» լինելն էլ ավելի ցայտուն է դառնում: Արդյոք էլեկտրոնային վարչարարությունը կարողանում է հասնել իր առջև դրված նպատակներին

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով կարգավորվելու պարագայում: Էլեկտրոնային վարչարարությունն ուղղված է ապահովելու ավելի բաց, ավելի մատչելի, ավելի թափանցիկ, ավելի ինտեգրված և քաղաքացուն մոտ գտնվող վարչարարություն:

Էլեկտրոնային վարչարարությունը, ի թիվս ավանդական վարչարարության համար սահմանված սկզբունքների, կարծում ենք, պետք է առնվազն հիմնված լինի հետևյալ վերանայված բովանդակությամբ<sup>9</sup> հիմնարար սկզբունքների վրա՝

- վարչարարության առավելագույնս հրապարակայնություն և թափանցիկություն: Ի տարբերություն փաստաթղթային շրջանառության, էլեկտրոնային կառավարման դեպքում ոչ միայն նկատելիորեն մեծանում է թափանցիկության անհրաժեշտությունը և պահանջում սահմանների ընդլայնում, այլև ինքնին առավել դյուրին է դառնում այդ սկզբունքի իրականացումը,

- մատչելիության սկզբունքով հնարավորություն է ընձեռվում քաղաքացիներին էլեկտրոնային տարատեսակ միջոցներով օգտվելու ծառայություններից և տեղեկատվությունից: Այս սկզբունքի կիրառումն էլեկտրոնային կառավարման դեպքում նպաստում է վարչարարության մասնակիցների կողմից արդեն վարչարարության ընթացքում հնարավոր խախտումների բացահայտմանը և կանխմանը, ինչը բխում է նաև վարչարարություն իրականացնող մարմնի շահերից: Այսպիսով, այս դեպքում ընդգծվում է մատչելիության դերը վարչարարության ինչպես նախնական, անպես էլ ընթացիկ փուլերում,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխօգնության սկզբունքն էլեկտրոնային կառավարման դեպքում ոչ միայն բարձրացնում է համագործակցության որակը, այլև նպաստում է հնարավոր շահագրգռվածություն ունեցող այլ վարչական մարմինների, ինչպես նաև վարչարարության մասնակիցների ակտիվ ներգրավվածությանը նաև այդ փուլում,

- պետական, ծառայողական կամ օրենքով պաշտպանվող այլ տեղեկատվության գաղտնիության ապահովման անվտանգության սկզբունքով պահանջվում է էլեկտրոնային ծառայությունների մա-

---

<sup>9</sup> Կոնկրետ նշված սկզբունքների նոր բաղադրիչներին մասամբ կանոնադրաբանորեն սույն հոդվածում:

տուցման դեպքում երաշխավորել առնվազն այն աստիճանի անվտանգություն, ինչը հնարավոր է գործնականում ապահովել թղթայինի դեպքում: Ընդ որում, առանձին դեպքերում անհրաժեշտ է ապահովել լրացուցիչ անվտանգության միջոցներ՝ հաշվի առնելով էլեկտրոնային տեղեկատվությունը հասանելի դարձնելու ապօրինի եղանակների խիստ տարածվածությունը,

- համաչափության սկզբունքի համաձայն, քաղաքացուց արգելվում է պահանջել ավելորդ տեղեկատվություն, սակայն էլեկտրոնային կառավարման դեպքում էլ ավելի է մեծանում անհրաժեշտ տեղեկատվությունը վարչարարության կանոններով ու գործիքներով ձեռք բերելու հնարավորությունը, ինչն առավել իրատեսական է դարձնում հիշյալ սկզբունքի կիրառումը,

- որակյալ էլեկտրոնային վարչարարության սկզբունքի համաձայն ծառայությունների էլեկտրոնային եղանակով մատուցումը չպետք է ոչ մի դեպքում ազդի դրա որակի վրա կամ նվազեցնի պատասխանատվությունը: Այս սկզբունքը իրագործելու համար կարող է անհրաժեշտություն առաջանալ վերանայելու տեղական կապի որակը և տեղեկատվական քաղաքականությունը (ինչը խիստ անհրաժեշտ է մեր հանրապետությունում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական սահմանափակ հնարավորություններն ու խոցելի իրավակիրառ պրակտիկան) և այլն:

Սկզբունքների շարքում իրավագետների մոտ տարածված է այն իրավաչափ մոտեցումը, ըստ որի՝ պետությունը պետք է գերծմնա համակարգչային այնպիսի ծրագրեր օգտագործելուց, որոնք պահանջում են հատուկ լիցենզիաներ, ավելորդ վճարներ և այլ վարչարարական բարդություններ<sup>10</sup>: Որոշ աղբյուրներում սա նույնպես դիտարկվում է որպես էլեկտրոնային վարչարարության սկզբունք:

Հետազոտության կարևոր խնդիրներից է համարվում նաև վարչարարության ժամկետների հարցը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի

---

<sup>10</sup> Տե՛ս **Халиков Р. О.**, Правовой режим электронного документа: вопросы использования электронного документа: вопросы использования электронной цифровой подписи, <http://www.russianlaw.net/files/law/doc/a200.pdf>:

երկար ժամկետներ»։ Կարծում ենք՝ էլեկտրոնային եղանակով վարչարարության առավելություններից մեկն էլ հենց այն է, որ միանգամայն իրատեսուրեն կարող են սահմանվել ավելի սեղմ ժամկետներ։ Երբ անհրաժեշտ տեղեկատվությունն առավել հասանելի և մատչելի է, երեսունօրյա ժամկետը նպատակահարմար է կիսով չափ կրճատել։

Էլեկտրոնային վարչարարությունը չպետք է դիտարկել միայն քաղաքացու նկատմամբ իրականացվող գործողությունների առումով։ Էլեկտրոնային վարչարարության բաղադրիչներից են ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր մարմինների միջև իրականացվող տեղեկությունների փոխանակումը<sup>11</sup>։ Էլեկտրոնային վարչարարության օգնությամբ կարող է առավել արդյունավետ դառնալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-18-րդ հոդվածներով սահմանված վարչական մարմինների կողմից փոխօգնության տրամադրումը, ուստի, կարծում ենք, էլեկտրոնային եղանակով փոխօգնության տրամադրման համար տեղին է սահմանել առանձին կարգ և լրացուցիչ եզրույթներ (օրինակ՝ «էլեկտրոնային հայտ», «էլեկտրոնային եղանակով չտրամադրվող տեղեկատվություն», «էլեկտրոնային փոխօգնության ժամկետներ», «էլեկտրոնային փոխօգնության սահմաններ» և այլն)։

Որքան էլ էլեկտրոնային վարչարարությունն առաջադեմ և արդյունավետ լինի, այնուամենայնիվ, վարչարարության այս եղանակը չի կարող բացարձակ ու վարչարարության ցանկացած տարատեսակի ու փուլերի համար կիրառելի համարվել։ Որոշ դեպքերում անհնարին է վարչարարությունը պատշաճ իրականացնել առանց ավանդական եղանակների դիմելու։ Մասնավորապես, խոսքը վերաբերում է վարչական մարմինների հայեցողական լիազորություններին, երբ նախքան վարչական ակտ կայացնելը, անհրաժեշտություն կարող է առաջանալ իրականացնելու լուծումներ կամ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր։ Անհրաժեշտ է չանտեսել, որ վարչարարությունն ամբողջապես էլեկտրոնային դարձնելը չի կարող բոլոր խնդիրներին լուծում հանդիսանալ, ընդհակառակը՝ որոշ դեպքերում (և ինչպես նշեցինք հատկապես՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս) վերջինս կարող է խոչընդոտներ առաջացնել ինչպես վարչարար-

---

<sup>11</sup> St' u Inderpreet Kaur, Effective E-Administration for good Governance, International Journal of Computing & Business Research ISSN (Online): 2229-6166, <http://www.researchmanuscripts.com/isociety2012/50.pdf>:



րություն իրականացնողի, այնպես էլ վարչարարություն հայցողի համար: Գործնականում իրավասու մարմիններին հարկ կլինի հանգամանորեն ուսումնասիրել և բացահայտել այն հարցադրումները, որոնք առնչվում են նշված առանձնահատկություններին և տալ դրանց լուծումներ՝ վերը նշված սկզբունքներին խիստ համապատասխան: Սա ևս ապացուցում է էլեկտրոնային վարչարարությունը մանրամասն իրավական կարգավորման ենթարկելու անհրաժեշտությունը:

Էլեկտրոնային վարչարարության համակարգի ներդրումը բազում դրական արդյունքների հետ մեկտեղ ուղեկցվում է որոշակի ռիսկերով՝ ընդհուպ կապված ազգային անվտանգության հետ: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք վարչարարությունն ավանդական ձևով շարունակել իրականացնել այն դեպքերում, երբ պահանջվող տեղեկատվությունը, անվտանգությունից ելնելով, ավելի արդյունավետ է թղթային կրիչով ստանալ կամ տրամադրել, քան համացանց ներբեռնել: Տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, այդ բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Հետևաբար՝ անհրաժեշտ է անդրադարձ կատարել վերը նշված օրենքի, ինչպես նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի դրույթներին և օրենսդրորեն սահմանել էլեկտրոնային վարչարարություն իրականացնելիս որոշ տեղեկատվության հասանելիության սահմանները և եղանակները:

Էլեկտրոնային վարչարարություն իրականացնելիս չափազանց կարևոր է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ճիշտ և միասնական կազմակերպումը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում դեռևս 2004 թ. գործում է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքը՝ այն ամբողջովին չի արտահայտում և չի կարգավորում այս ոլորտում առաջացող հարաբերությունները: Նշված իրավական ակտը չի պարզաբանում այնպիսի հասկացություններ, որոնք փաստացի օգտագործվում են՝ «էլեկտրոնային հաղորդագրություն», «էլեկտրոնային կնիք», «էլեկտրոնային հարցում», «էլեկտրոնային դիմում» և այլն: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականաց-

վող բարեփոխումների և էլեկտրոնային հասարակության ստեղծման անբաժանելի մաս պետք է դառնա համապետական մակարդակով հաստատված փաստաթղթաշրջանառության կազմակերպման, նույնականացման, ստանդարտացման սկզբունքների մեկ միասնական համակարգի կայացումը, որը կապահովի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների կատարելագործումը ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական մակարդակներում:

Կատարված ուսումնասիրություններն ամփոփելով՝ ընդգծենք, որ էլեկտրոնային պետություն, էլեկտրոնային կառավարություն կառուցելու համար, ինչպես նաև վարչարարության բնագավառում կատարվող բարեփոխումները գործնականում հաջողությամբ պսակելու համար առաջին հերթին անհրաժեշտ է իրավական կարգավորման առարկա դարձնել և օրենսդրական մակարդակով ամրագրել՝

- էլեկտրոնային վարչարարության հիմնական սկզբունքները,
- վարչարարությունն էլեկտրոնային եղանակով իրականացնելու ընդհանուր պահանջները,
- ավանդական և էլեկտրոնային եղանակով իրականացվող վարչարարության հավասարությունը,
- էլեկտրոնային վարչարարության սահմանափակումները,
- այլ օրենքների ու իրավական ակտերի կիրառելիության սահմանները էլեկտրոնային վարչարարության և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ոլորտներում առաջացող հարաբերությունների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարության ստեղծումը միանշանակ դրական քայլ է՝ դեպի ժողովրդավարություն, կառավարման թափանցիկություն, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, բյուրոկրատական քաշքշուկների նվազեցում, հասանելիություն: Սակայն կառավարման էլեկտրոնային ձևին անցնելը, որի անբաժան մասն է կազմում էլեկտրոնային վարչարարությունը, ամենևին չպետք է ինքնանպատակ լինի: Ցավոք, մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ այսօր ՀՀ կառավարությունը՝ իր [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքով, և բոլոր նախարարությունները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը՝ [www.yerevan.am](http://www.yerevan.am) կայքով, ապահովում են համապատասխան բաժին,

որի միջոցով կարող է հայցվել էլեկտրոնային վարչարարություն: Մակայն, մեր բազմաթիվ փորձերից և ոչ մեկը հաջողությամբ չպսակվեց, քանի որ տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չեղավ դիմումները ներբեռնել կայք և հարցում կատարել: Մա նշանակում է, որ էլեկտրոնային վարչարարության՝ մասնավորապես, և էլեկտրոնային կառավարման համակարգի՝ ընդհանրապես, կայացման համար միայն իրավական ակտերի առկայությունը բավարար չի կարող լինել. անհրաժեշտ է նաև ամուր տեխնիկական հիմք՝ անխափան աշխատանք իրականացնելու համար: Իրականացվող բարեփոխումները չպետք է մնան զուտ տեսական մակարդակի վրա: Անհրաժեշտ է, որ ծախսված գումարները, օգտագործված մարդկային ներուժն իրենց նպատակին ծառայեն և գործնականում էլ արդյունավետորեն կիրառելի լինեն:

**Нане Казарян**

*Аспирант кафедры конституционного права ЕГУ*

## **АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ПЕРЕСМОТРА ПРАВОВЫХ ОСНОВ ЭЛЕКТРОННОГО АДМИНИСТРИРОВАНИЯ**

Нынешний технологический прогресс, а так же новые понятия основ управления с неизбежностью приводят к трансформации общественных, социальных, экономических и правовых отношений любого государства. Сегодня, с помощью ИКТ государственные органы и органы местного самоуправления стали более доступными для граждан, чем когда-либо, и эта доступность обеспечивается с помощью системы электронного управления (e-governance). В эпоху информационных технологий наше государство тоже внедрило систему электронного управления, неотъемлемой и важной составляющей которой является электронное администрирование - ключевой вопрос данного исследования. Электронное администрирование – это ряд механизмов, которые преобразовывают традиционные бумажные процессы в электронные, с целью ввести полную прозрачность и подотчетность.

Несмотря на то, что в Армении сделаны некоторые важные шаги в направлении формирования электронного управления, весь по-

тенциал электронного администрирования остается не раскрытым. Процесс интеграции коммуникационных и информационных технологий в Армении протекает на фоне неравенства уровня знаний, опыта и инструментария физических лиц, а так же отсутствия законодательной базы, поддерживающей упомянутые инновации. Мы верим, что решения тех проблем, которые были выявлены в процессе изучения, могут быть достигнуты в первую очередь при тщательном правовом урегулировании.

В этой статье мы рассмотрим некоторые проблемы отечественного электронного администрирования, его правового регулирования и предложим несколько реалистичных решений.

**Nane Ghazaryan**

*PHD student of the YSU Chair of Constitutional Law*

## **CONTEMPORARY ISSUES OF REVIEWING THE LEGAL FRAMEWORK OF E-ADMINISTRATION**

Considering the current scientific and technological progress and the radical reviewing of visions on the basics of governance, being able to perform any necessary activity related to federal and local government bodies from any place in the world 24/7 is rather realistic. To say more, the whole world gives prime preference to this method and our country is not an exception.

The world is globalizing much faster nowadays, creating unprecedented possibilities, especially for the developing countries. And, as a command of the era of IT, the government of the Republic of Armenia also initiated the adoption of an electronic governance system, an important component of which is e-administration, the axis of our research. e-Administration, or electronic administration, refers to any of a number of mechanisms which convert what in a traditional office are paper processes into electronic processes, with the goal to introduce total transparency and accountability leading to better e-Governance within any organization.

The potential for e-administration in our country remains largely unexploited, even though some very important steps towards forming E-governance have been made (the transition to «Mulberry» electronic

system of document control, electronic signature, ability to electronically follow the proceeding of a document and an application, the electronic system of submitting the tax statements, ID cards and anthropometric passports, founding of electronic judicial informational system, official website for public announcements via internet etc). At the same time we have no legislative basis supporting the innovations mentioned above. We see a huge problem here, as we believe that the technological progress and legislative reforms should move ahead consistently.

In this article we will explore some problems of Armenian e-administration, its legal regulation and suggest some realistic solutions.

**Բանալի բառեր՝** էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային վարչարարություն, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, էլեկտրոնային հասարակություն, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ, վարչարարության սկզբունքներ, ժողովրդավարություն:

**Ключевые слова:** электронное управления, электронное администрирование, электронный документооборот, электронное общество, ИКТ, принципы администрирования, демократия.

**Key Words:** e-governance, e-administration, e-document, e-society, ICTs, principles of administration, democracy.